ՆԵՐՍԵՍ ՄՈԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՄԻ ՁԵՌԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Հայ ձեռագրերի մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն սակավաթիվ գրչագրերը, որոնք անմիջականորեն առնչվում են անցյալի մեր նշանավոր մատենագիրներին։ Դրանցից է Մաշտոցյան Մատենադարանի № 5128 ձեռագիրը, որը կապվում է Ներսես Մոկացու (Բեղլու) անվան հետ։ Ձեռագրի պահպանակի վրա գրված է. «Այս գիրքս Բեխլու Ներսէսի ձեռագիրն է և շատ բանք, որ աստ կան, նորին Ներսէսի են։ Այս գիրքս Ժ տարի իմ խուցս եկաց, զոր Տէր լուսաւորէ նորին հոգին, ընդ նմին և իմս Գրիգորի Վանեցւոյ վարդապետի»։

Պիտի կարծել, Գրիգոր Վանեցին ձեռագիրն իր մոտ է պահել 1625—1635 թթ. (Ներսես Մոկացին մահացել էր 1625 թ.)։

Նույն գրչագրի մեկ ուրիշ հիշատակարանի մեջ (թերթ 280ա), գրված նույն 1635 թ., կարդում ենք. «Փա՛ռք համագոյ, համազօր, համապայծառ միասնական սուրբ երրորդութեան և միաստուածութեան, Հաւր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն յերիս յաւիտեանսն, ամէն։ Արդ կատարեցաւ գիծս, որ կոչի Եւագրի ընդ խորհուրդ և այլ բաղում ժողովեալ ձեռամբ անիմաստ և տխմար գրչի Մովսէսի ի թուականիս ՌՁԴ» (1635)։

№ 5128 ձեռագիրը գրել են տարբեր գրիչներ։ Հիշատակարանները մեզ ավանդում են երկուսի անունը։ Մեկը, ինչպես տեսանք ըստ Գրիգոր Վանեցու, Ներսես Մոկացին է, իսկ մյուսը՝ Մովսեսն է. ի դեպ, կարծես թե նա իրեն է վերագրում ամբողջ ձեռագիրը՝ սկսած Եվագրի վարդապետությունից, որը տեղավորված է ձեռագրի սկզբում։

Ինչպե՞ս հասկանալ. ո՞վ է գրել այս ձեռագիրը, ո՞ւմ գրչի արգասիքն է։ Գրչագրի մանրազնին ընթերցումից պարզվում է, որ մինչև 147ա թերթը պատկանում է բացառապես մի գրչի։ Երկրորդ մասի նյութերն էլ, հավանաբար, գրել են տարբեր գրիչներ։ Մեր համոզմամբ՝ ձեռագրի առաջին մասի հետ Մովսես գրիչը բոլորովին չի առնչվում, նա գործ է ունեցել միայն երկրորդ մասի հետ, այն էլ ընդօրինակելով միայն առանձին բնագրեր։ Ինչո՞վ բացատրել երկրորդ մասի ձեռագրերի տարբերությունները։ Արդյոք Մովսես գրիչը որոշ հատվածներ հանձնարարել է ուրիշների՞, թե՞ նա պարզապես դրել է տարբեր ձեռագրերով։ Հավանականը առաջին ենթադրությունն է։ Բայց քանի որ ինքը եղել է ձեռագրի հիմնական գրիչը, ուստի ձեռագրի վերջում հիշատակարանը թողել է իր անունով։ Պետք է ենթադրել նաև, որ Մովսես գրիչը ժողովածուի մեջ ամենանշանակալից գործը համարել է Եվագրի վարդապետությունը, ուստի և, ըստ ժամանակի սովորության, ժողովածուն կոչել է այդ գործի անունով։ Այդպիսի ժողովածուներից է, օրինակ, Ներսես Շնորհալու ստեղծագործություններն ընդգրկող «Յիսուս որդի» կոչվող ժողովածուն, որն

այդպես է վերնագրվել, որովհետև այնտեղ ամփոփված պոեմը սկսվում է այդ բառերով։

Իսկ ո՞վ է գրել № 5128 ձեռագրի առաջին մասը։ Ամենայն հավանականությամբ՝ Ներսես Մոկացին։ Այսպես ասելու համար նկատի ունենք հետևյալ պարագաները։ Ներսես Մոկացին XVII դարի առաջին քառորդին ծավալված լուսավորչական շարժման նշանավոր ներկայացուցիչներից էր, իսկ այդ շարժման գլխավոր նպատակներից մեկն էլ վանական գրականության ստեղծումն էր, հին ձեռագրերի ուսումնասիրությունը ու հավաքումը և նորերի բազմացումը։ Ուշագրավ է, որ առհասարակ վանական միաբանության անդամները միաժամանակ մանկավարժներ, գրիչներ և ծաղկողներ էին։ Այդ խնդիրը առաջնահերթ էր նաև Ներսես Մոկացու հիմնած Լիմ անապատի միաբանության համար, որտեղ և գրվել է № 5128 ձեռագիրը՝ 1625-ից առաջ, և շարունակվել մինչև 1635 թ.։ Ներսես Մոկացու՝ գրչությամբ զբաղվելու մասին ունենք ավելի հին վկայություն։ Երուսաղեմի № 1311 ձեռագրի հիշատակարանում[1] ասվում է, որ 1602 թ. Հայրապետ վարդապետը (որը Ներսես Մոկացու հորեղբայրն էր և ուսուցիչը) հանձնարարել էր Ներսեսին իր համար ընդօրինակել Դիոնիսոս Թրակացու Քերականությունը[2]։ Ինչպես տեսնում ենք, անժխտելի է, որ Ներսես Մոկացին գրագրվել է գրչությամբ, ուստի և հավանական, որ հենց ինքն էլ ընդօրինակել է № 5128 ձեռագրի նվագրի վարդապետությունը և նրան հաջորդող գործերը, որոնց բովանդակությունը խիստ պատշաճում է վանական միաբանության առաջնորդի ցանկություններին և պահանջներին, ինչպես նաև եկեղեցու ներքին կարգ ու կանոնին և միաբանության անդամների կենցաղին ու նիստուկացին։

№ 5128 ձեռագիրը Ներսես Մոկացու անվան հետ կապվելու ուրիշ հանգույցներ էլ ունի։ Օրինակ, ձեռագրի սկզբի մասում տեղավորված տոմարական մի գործի հիշատակարանի մեջ, որը գրված է 1629 թ. (Ներսես Մոկացու մահվանից հետո), խոսվում է այդ բնագրի ընդօրինակության շարժառիթների մասին. «Եթէ ասէր՝ զայս ո՞վ խնդրեաց. Ներսէս վարդապետն խնդրեց՝ յրհասաւ իւր փափարանայն, մինչև խաչատուր վարդապետն ուղեց, Աստուծոյ կարողութեամբ, եղրարց աղօթիւքն զտաւ, զմեզ ուրախացուց. Աստուած զիւր հոգին լուսաւորէ, ամէն» (թերթ 3ա—7ա)։ Ինչպես տեսնում ենք, Ներսես Մոկացին այդ ձեռագրի ստեղծման հետ կապված իր որոշ ծրագրերը մահվան պատճառով չի կարողացել իրականացնել կամ չի տեսել իրականացած։

Այս տոմարական գործը սկզբից պակաստվոր է. երևում է, որ այն հետագայում է կցվել ձեռագրին։ Դատելով հիշատակարանից, այդ գործը միացվել է տվյալ ձեռագրին ի հիշատակ Ներսես Մոկացու, որը եղել է տոմարական գործի պատվիրատուն և որի անվան հետ կապված է № 5128 ձեռագիրը։

№ 5128 ձեռագրի մեջ, նրա երկրորդ մասում, որի հիմնական գրիչը մենք համարում ենք Մովսեսին, զետեղված է Ներսես Մոկացու հայտնի պոեմը,

---

1 Ն. Ակինյան, Բաղէշի դպրոցը, Վիեննա, 1952, էջ 72։

2 Մաշտոցյան Մատենադարանի որոշ ձեռագրերում կան 1590—1602 թթ. ժամանակագրված գործած, ծաղկող Ներսես Մոկացու նկարներ։ Ժամանակով, ապրած միջավայրով և անուն, մականունով այդպան նման երկու Ներսեսներ արդյո՞ք տարբեր մարդիկ են, թե խոսքը միևնույն անձնավորության մասին է։ Ներսես Մոկացու կենսագրությանը վերաբերող այս ուշագրավ տվյալը անծանոթ է բանասիրությանը և կարոտ է լուրջ ուսումնասիրության, որին անդրադառնալու ենք այլ առիթով։

նվիրված Մեծ անապատի հիմնադրմանը. «Ներբողեան գովեստի շարեցուցց արանցն, որ եղեն սկիզբն անապատի կարգել յագգս մեր» (թերթ 197բ—ների մասին։ Այս փաստն էլ յուրովի Ներսես Մոկացու անունը կապում է պարունակում Մեծ անապատի ստեղծման պատմության ու նրա հիմնադիրների մասին։ Այս փաստն էլ Ներսես Մոկացու անունը յուրովի կապում է տվյալ ձեռագրի հետ։ Մանավանդ, որ ձեռագրի առաջին հիշատակարանի մեջասված է, թե «...շատ բանք, որ աստ կան, նորին Ներսէսի են»։ Պիտի նկատել, սակայն, որ այդտեղ Ներսես Մոկացուն որոշակիորեն պատկանող այլ նյութեր չկան։ Ճիշտ է, կան մի քանի անանուն տաղեր, բայց դրանք գեթ մասամբ Ներսես Մոկացուն վերագրելը առայժմ անհնար է։

Մատենադարանի № 5128 ձեռագիրը ժողովածու է, որն իր մեջ պարունակում է տարբեր բնույթի գործեր և ունի հարուստ բովանդակություն։

Այստեղ կան տոմարական, կենսագրական գործեր, խրատներ, քարոզներ, մեկնություններ, աշխարհացույց, տաղեր, ոտանավորներ, ներբողներ, գանձեր, հանելուկներ և այլն, որոնք միաժամանակ ներկայացնում են Լիմ անապատի միաբանության անդամների հետաքրքրությունների շրջանակը։

Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ Մատենադարանի № 5128 ձեռագիրն իր առաջին մասով պատկանում է XVII դարի բանաստեղծ և հասարակական գործիչ Ներսես Մոկացու գրչին, որը հետագայում (1625—1635 թթ.) լրացրել են Մովսես գրիչը և ուրիշներ։ Այն արժեքավոր է Ներսես Մոկացու կենսագրությունը, ինչպես նաև Լիմ անապատի միաբանության պատմության հարցերը լուսաբանելու առումով։

О РУКОПИСИ КАСАЮЩЕЙСЯ НЕРСЕСА МОКАЦИ

А. Г. ДОЛУХАНЯН

Резюме

Рукопись № 5128 Матенадарана имени Маштоца связана с именем известного представителя просветительного движения первой четверти 17 в., основателя школы на острове Лим, поэта и педагога Нерсеса Мокаци. Предполагается, что первая часть рукописи написана рукой самого Нерсеса Мокаци. Рукопись имеет богатое содержание, что очень ценно для освещения некоторых данных биографии Нерсеса Мокаци, а также истории школы на острове Лим.